

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

դ.յ.ն., պրոֆ., акад. НАН РА **Գ.Ս.Կազինյան** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Ր.Բալայան**, д.ю.н. **Վ.Վ.Գրուզдев**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Վ.Վ.Գրուզдев**, к.и.н., доц. **Ն.Յ.Խաչատրյան**, к.п.н., доц. **Մ.Մ.Մարգарян**, к.э.н., доц. **Ն.Յ.Խաչатрян**, к.ю.н. **Ա.Գ.Արությունյան**, к.ю.н., доц. **Ա.Ա.Մանասян**, к.ю.н., доц. **Ս.Գ.Պետикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆԸ СЕКЦИЯ ПОЛИТОЛОГИИ

ԿՈՆՖԼԻԿՏԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՊՀ Զաղաքական գիտության պատմության և
տեսության ամբիոնի դոցենտ, ք. գ. թ.
khgalstyan@yahoo.com, khgalstyan@ysu.am

Հայ ժողովրդի կենսական շահերի բավարարման ու ՀՀ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից Արցախյան հիմնահարցն ունի առաջնային նշանակություն: Արդեն շուրջ քառորդ դար է, ինչ հակամարտությունը մնում է չկարգավորված, աղբբեջանա-արցախյան սահմանին լարվածությունը պահպանվում է, իսկ 2016թ-ի ապրիլյան դեպքերն ու լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման իրական վտանգը ստիպում է մեզ նորովի արժևորել հակամարտության կարգավորման հիմնական բաղադրատարրերը, ասպարեզում դրված հիմնական բանակցային սկզբունքներն ու փաստաթղթերը, ինչու էլ, խոսել նաև Արցախյան հակամարտության կարգավորման հնարավոր այլընտրանքների ու դրանց կյանքի կոչման հավանականության մասին: Չէ՞ որ, քաղաքականությունն ընդունված է համարել հնարավորի արվեստ, իսկ ճգնաժամային դիվանագիտության դեպքում երբեմն գործ ենք ունենում նաև անհավանական իրավիճակների հետ, որտեղ արդեն Fortius Diplomacy-ին¹ այսպես կոչված «Բարձր դիվանագիտությունը» թույլ է տալիս «գլխից բարձր» թռչել, ստեղծագործաբար մոտենալ քարացած պատկերացումներին, ջարդել կարծրատիպերն ու հակամարտությունների փոխակերպման որակական թռիչք ապահովել:

Ակնհայտ է, որ Արցախյան հակամարտության կարգավորման արդեն քսան տարուց ավել տևող բանակցային գործընթացն ընթանում է շեղված ձևաչափով, արհեստածին հակադրվող սկզբունքների ու խնդրի վերաբերյալ քարացած պատկերացումների շրջանակներում: Զանի որ փոխզիջումային որոշումներն են հռչակված որպես հակամարտության կարգավորման միակ եղանակ, ու կողմերը շարունակում են այդ ուղղությամբ անարդյունք փնտրությունները, մեր կարծիքով, Արցախյան հակամարտության

¹ Տես *Галстян Х.* Кризисная дипломатия России в контексте реализации “SMART POWER” стратегии// Проблемы национальной безопасности в условиях глобализации и интеграционных процессов(междисциплинарные аспекты). Материалы Международной Научной Конференции, Ереван, Изд. РАУ, 2015.

կարգավորման համատեքստում արդիական է դառնում հակամարտությունների կարգավորման այլընտրանքային մեթոդաբանության կիրառումն ու այդ լույսի ներքո կարգավորման սցենարների քննարկումը:

Արցախյան հակամարտության կարգավորման հիմնական ԲՈԼԱ-ները

Հակամարտությունների կարգավորման այլընտրանքային մեթոդաբանությունը, նախևառաջ, ենթադրում է բանակցային որոշումների հնարավոր այլընտրանքների մշակում, գնահատում և կիրառման հնարավորությունների հաշվարկում: Բանակցային գործընթացում հատկապես այս բաղադրատարրի վրա են մեծ ուշադրություն դարձնում ամերիկյան հեղինակներ Ռ. Ֆիշերն ու Ու. Յուրին, առաջ քաշելով BATNA¹-ի (Best Alternative To a Negotiation Agreement) գաղափարը: Մասնավորապես, նրանք նշում են, թե որքան կարևոր է զարգացնել սեփական BATNA-ն այն դեպքերի համար, երբ բանակցությունները իսկապես չհամարվեն որպես համատեղ որոշումների ընդունման լավագույն եղանակը: «Եթե դուք լրջորեն չեք մտածել, թե ինչ կանեք այն դեպքում, երբ բանակցային համաձայնությունը չստացվի, ուրեմն դուք բանակցում եք կուրորեն», - նշում են հեղինակները²: Նրանք խորհուրդ են տալիս նաև բանակցությունների նախապատրաստական փուլի ժամանակ զարգացնել սեփական այլընտրանքները, ինչպես նաև փորձել կազմել ընդդիմախոսինը՝ դիմացինի գործողությունները կանխատեսելի և վերահսկելի դարձնելու համար: Ընդհանրապես, BATNA եզրույթի հայերեն թարգմանությունը՝ ԲՈԼԱ³-ն, իր մեջ որոշակի խորհրդանշական իմաստ է պարունակում: Մասնագիտական կիրառման տեսանկյունից ԲՈԼԱ-ն բանակցային որոշումների լավագույն այլընտրանքն է, իսկ առօրյա, կենցաղային ընկալման մեջ ԲՈԼԱ-ն նշանակում է «բավական է, դե հերիք ու բոլա»: Ընդ որում ԲՈԼԱ-ի առօրյա գործածությունը իմաստային առումով բավականին մոտ է հասկացության մասնագիտական մեկնաբանությանը: Այլ կերպ ասած, ձևակերպված ԲՈԼԱ-ները վկայում են այն մասին, թե բանակցային կարգավորման ինչպիսի այլընտրանքային տարբերակներ ունեն կողմերը:

Պատերազմը որպես Արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորման այլընտրանք

Իրականում, ադրբեջանական ապրիլյան քառօրյա լայնածավալ ագրեսիան որոշակի առումով կանխատեսելի էր, քանի որ հատկապես վերջին տարիներին, բանակցային գործընթացին զուգահեռ, Ադրբեջանը ակտիվորեն մշակում ու մանրակրկիտ պլանավորում էր իր ԲՈԼԱ-ն՝ ի դեմս պատերազմի վերսկսման «բարոյական» իրավունքի հիմնավորման: Այդ երկրի

¹ Տես *Fisher R., Ury W.* Getting To Yes: Negotiation Agreement Without Giving In. 1991.

² Նույն տեղում, էջ 100:

³ *Գալստյան Խ.* Զաղաքական բանակցություններ. Տեսություն և պրակտիկա, Եր., 2007, էջ 75:

բարձրագույն ղեկավարությունը բազմիցս, տարբեր միջազգային հարթակները, պատեհ ու անպատեհ առիթներն օգտագործում էր բարձրաձայնելու հետևյալ թեզը. եթե բանակցությունների միջոցով կրանք չստանան Ղարաբաղը, ապա դա կանեն ռազմական ճանապարհով¹: Իսկ ապրիլյան ագրեսիայի օրերին ՌԴ-ում Ադրբեջանի դեսպան Փ. Բյուլբյուլջուլին առացի փյուռնակապես սեթևեթանքների հայտարարել էր, որ հենց Բաքուն է նախաձեռնել պատերազմը՝ խնդրի չկարգավորվածության պատճառով²: Ըստ նրա, Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը իր ելույթներում բազմիցս է ընդգծել, որ իրենք կողմնակից են խնդրի խաղաղ կարգավորմանը, սակայն եթե կոնֆլիկտը չկարգավորվի, ապա նրանք ուժով կգրավեն Ղարաբաղը³: Այնպես որ, հարցադրումը, թե ով է սկսել ապրիլյան հարձակումը, ստանում է միանշանակ պատասխան՝ Ադրբեջանը, որը պատերազմական գործողությունների սանձազերծմամբ փորձեց իրագործել իր ԲՈՒԱ-ն: Ի՞նչ ստացվեց արդյունքում. հարյուրավոր զոհեր, տասնյակներով խոցված տանկեր, ռազմական ուղղաթիռներ, ծանր զրահատեխնիկա, ԱԹՍ-ներ և այլն: Իհարկե, միջևորդների (հիմնականում ռուսական) ակտիվ միջամտության արդյունքում լայնածավալ պատերազմը կանխվեց, սակայն երաշխիքներ, որ այդ ամենը նորից չի կրկնվի, բնականաբար, ոչ ոք տալ չի կարող: Հայաստանյան հասարակության շրջանում մի կողմից նկատվեց ազգային միասնության ու համախմբման աննախադեպ ալիք, մյուս կողմից՝ ապրիլյան դեպքերը վեր հանեցին պաշտպանության ու բանակաշինության ոլորտում այս տարիների ընթացքում թույլ տրված խորքային բացթողումներ ու սխալներ, որոնց արագ վերացումը ազգային անվտանգության կենսական նշանակություն ունի:

Ընդանրապես, քննարկելով Արցախյան հիմնահարցի լուծման ռազմական տարբերակը, մի բան պետք է հաշվի առնել, որ կողմերն այսօր ունեն սպառազինության այնպիսի աստիճան, որ կարող են իրար փոխադարձ ոչնչացնել: Ի դեպ, նման կոչեր և՛ ադրբեջանական, և՛ արցախյան, և՛ հայաստանյան կողմերից հնչեցին: Հակամարտության լուծման նման այլընտրանքային սցենարը, որքան էլ բացասական, սակայն մի դրական կողմ ունի. այն ստիպում է կողմերին նստել բանակցությունների սեղանի շուրջ ու փնտրել հիմնահարցի խաղաղ կարգավորման ուղիներ:

Արցախի անկախությունը որպես ԲՈՒԱ. որքանով է այն արդարացված

Որքան էլ տարօրինակ է հնչում հարցադրումը, բայց, ստացվում է այնպես, որ Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի անկախության ճանաչումը հայկական կողմը կիրառում է որպես ԲՈՒԱ: Մասնավորապես, ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին, երբ ՀՀ նախագահը ԵԱՀԿ

¹ Ств Речь И. Алиева на торжественном военном параде по случаю 93-й годовщины создания Вооруженных сил, 26 июня 2011 [ru. president.az]

² Ств Посол Азербайджана в РФ: «Мы предупреждали, что начнем войну за наши земли» [http://regnum.ru/news/polit/2110400.html]

³ Ств նույն տեղում:

Երկրների դեսպանների հետ հանդիպման ժամանակ հայտատարում է, որ, եթե Ադրբեջանը շարունակի լայնածավալ ռազմական գործողությունները, ապա Հայաստանը կճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը և հանձնարարում է ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը ռազմական փոխօգնության պայմանագիր պատրաստել, որն այդպես էլ թղթի վրա է մնում, ոչ այլ ինչ է, քան ԲՈԼԱ-ի կիրառման անհաջող փորձ: Ստացվում է, որ մենք Արցախի ճանաչմամբ ենք սպառնում Ադրբեջանին ու այդպե՞ս ենք պատասխանում ադրբեջանական ագրեսիային: Բացի այդ, Արցախի անկախության ճանաչման հարցը ամեն անգամ Ազգային Ժողովի օրակարգ բերելով ու դեմ քվեարկելով այդ նախաձեռնությանը՝ մենք մեծ վնաս ենք հասցնում Արցախի միջազգային ճանաչման գործընթացին, թուլացնում ենք Արցախի անկախ գոյության իրավունքի նկատմամբ անբեկանելի հավատը: Մանավանդ, որ լավ գիտենք, Ադրբեջանը հրապարակավ բոլոր ատյաններում հայտարարել է, որ երբեք չի ճանաչելու Արցախի անկախությունը և ոչ մի տարածքային զիջման դիմաց: Հետևաբար, տրամաբանական հարց է առաջանում. ինչի՞ շուրջ ենք բանակցում:

Այլընտրանքային ԲՈԼԱ-ները Արցախյան կարգավորման համատեքստում

Բացի վերոնշյալ տարբերակներից, Արցախյան հակամարտության կարգավորման համատեքստում առնվազն պետք է քննարկվեն ու հայեցակարգային տեսքի բերվեն նաև այլ հնարավոր սցենարներ:

1. Առաջին սցենարը հարաբերականորեն անվանենք «նամակ Ռուսաց թագավորին»: Ի դեպ, ոչ վաղ անցյալում հայտնի արցախցի հասարակական-քաղաքական գործիչ 2. Բալայանի բաց նամակը ՌԴ նախագահ Վ. Պուտինին լիովին տեղավորվում է այլընտրանքային կարգավորման նշված տրամաբանության մեջ: Այդ նամակում 2. Բալայանը հիշեցնում է, որ Արցախը ռուսական կայսրությանն է միացել շատ ավելի վաղ, քան Հայաստանն ու Ադրբեջանը, ու Արցախի խնդիրը, նախևառաջ, Ռուսաստանի խնդիրն է: Իհարկե, նման հարցադրումը երկակի մեկնաբանություն կարող է ունենալ, սակայն, դատելով ինքնահռչակ պետությունների ու նրանց ճանաչման հարցում ռուսաստանյան բարձրագույն ղեկավարության վերաբերմունքից, կարելի է առնվազն մեկ օրինաչափություն նկատել. այն ինքնորոշվող սուբյեկտները, որոնք անկախության հռչակումն օգտագործում են որպես միջանկյալ հանգրվան ՌԴ-ին միանալու ճանապարհին, միանշանակ ստանում են այդ պետության աջակցությունն ու հովանին՝ դրանից բխող անվտանգության բոլոր երաշխիքներով հանդերձ: Երբ 2. Բալայանը հիշատակում է ռուսական կայսրության իրական սահմաններն ու նկրտումները, այդ թվում և Գյուլիստանի պայմանագիրը, միգուցե, թաքնահարույց կերպով իենց այդ ակնարկն է անում. տեր կանգնել ռուս կայսրերի թողած ժառանգությանը:
2. Երկրորդ սցենարն իր մեջ պարունակում է հակամարտությունների կարգավորման ինտեգրացիոն մոդելի տրամաբանությունը: Մաս-

նավորապես, Արցախի կառավարությունը, որքան հայտնի է, պաշտոնական հստակ դիրքորոշում չի հայտնել, թե տարածաշրջանային ո՞ր ինտեգրացիոն մոդելի՝ Եվրոպականի, թե՞ Եվրասիականի մեջ է տեսնում իր ապագան: Մինչդեռ Արցախյան հակամարտության փոխակերպման տեսանկյունից ինտեգրացիոն մոդելները կարող են պոզիտիվ դերակատարում ունենալ: Օրինակ՝ Եվրոպական ինտեգրացիայի համատեքստում միջսահմանային համագործակցության խթանման ու հակամարտությունների կարգավորման արդյունավետ մեխանիզմ են համարվում Եվրոտարածաշրջանները: Եվրասիական ինտեգրացիայի շրջանակներում արդեն բարձրաձայնվում է Եվրասիական ռեգիոնների գաղափարը¹: Այնպես որ, Արցախի ղեկավարությունը կարող է նման նախաձեռնություն ցուցաբերել, Եվրասիական ինտեգրացիայի հայտ ներկայացնել նոր՝ Եվրասիական ռեգիոնի կարգավիճակով:

3. Երրորդ այլընտրանքն ավելի արմատական քայլեր է ենթադրում, որը, սակայն, արդարացված կարելի է համարել, քանի որ Արցախյան հիմնախնդրի հարցում, մեր կարծիքով, հայ ժողովուրդը՝ ի դեմս ԲՈԼԱ-ի, պետք է ցույց տա, թե Արցախն ինչ արժեքային նշանակություն ունի մեզ համար, և հանուն Արցախի անվտանգ ու խաղաղ գոյության մենք ինչի ենք պատրաստ գնալ: Այս առումով, Արցախյան կարգավորման հնարավոր այլընտրանքային տարբերակների մեթոդաբանական գինանոցում իր ուրույն տեղը պետք է գտնի նաև ոչ թե Արցախի անկախության, կամ ԶԶ-ի հետ միավորման տարբերակները, այլ լրիվ հակառակ գործընթացը՝ միջազգայնորեն ճանաչված պետության (մեր դեպքում՝ ԶԶ-ի) միավորումը չճանացված հանրապետությանը՝ Լեռնային Ղարաբաղին: Նախ, աշխարհում չկա նման նախադեպ, իսկ շատերը կհաստատեն, որ հատկապես արևմտյան իրավական ու քաղաքական աշխարհընկալումը կառուցված է հենց նախադեպի ինստիտուտի վրա: Բացի դա, միջազգային որևէ իրավական փաստաթուղթ գոյություն չունի, որն արգելի Հայաստանի կողմից նման քայլի իրագործումը: Հետևաբար, ժողովրդավարության հայտնի սկզբունքի համաձայն, այն ինչ արգելված չէ օրենքով՝ թույլատրված է: Այնպես որ, մեր խորին համոզմամբ, Արցախյան հիմնահարցի կարգավորման ավանդական մեխանիզմներին զուգահեռ պետք է շրջանառության մեջ դնել ու պատշաճ գիտական տեսքի բերել նաև կրեատիվ դիվանագիտության շրջանակներում ռաջարկվող կարգավորման այլընտրանքային մոդելները:

¹ Տե՛ս *Галстян Х.* Перспективы урегулирования этнополитических конфликтов в рамках Евразийского интеграционного проекта. // Политическая наука перед вызовами современной политики. Материалы VII Всероссийского конгресса политологов, Москва, 19–21 ноября 2015 г./ Под общ. ред. О. В. Гаман-Голутвиной, Л. В. Сморгунцова, Л. Н. Тимофеевой — Изд. <<Аспект Пресс>>, 2015.

Խաչիկ Գալստյան

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԵՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐՑԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՏՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ Արցախյան հակամարտություն, հակամարտության փոխակերպում, այլընտրանքային մոտեցումներ, բանակցային որոշման լավագույն այլընտրանքներ, ինտեգրացիոն մոդել

Հայ ժողովրդի կենսական շահերի իրագործման ու ազգային անվտանգության ապահովման տեսակյունից Արցախյան հիմնահարցն ունի կենսական նշանակություն: Արդեն 25 տարուց ավելի է, ինչ ընթանում է խնդրի կարգավորման բանակցային գործընթացը, սեղանին դրված են եղել խնդրի կարգավորման տարբեր փաստաթղթեր, որոնք հիմնված են եղել փոխզիջումային որոշումների ընդունման տրամաբանության վրա: Մինչդեռ, Արցախյան հակամարտության կարգավորման հեռանկարների տեսանկյունից հույժ կարևոր գիտա-գործնական նշանակություն կարող են ունենալ հակամարտությունների կարգավորման այլընտրանքային մեթոդաբանության հիմքով նոր մոտեցումների ու մոդելների առաջ քաշումն ու դրանց պրակտիկ ներդրումը, որոնցից մի քանիսը շրջանառվում են սույն հոդվածի շրջանակներում:

Хачик Галстян

ПРИМЕНЕНИЕ МЕТОДОЛОГИИ АЛЬТЕРНАТИВНОГО УРЕГУЛИРОВАНИЯ В КОНТЕКСТЕ АРЦАХСКОГО КОНФЛИКТА

Ключевые слова: Арцахский конфликт, трансформация конфликтов, альтернативные подходы, наилучшая альтернатива переговорных решений, интеграционный модель

С точки зрения реализации национальных интересов и обеспечения национальной безопасности армянского народа проблема Арцаха имеет первостепенное значение. Уже более чем 25 лет, как ведутся переговоры между конфликтующими сторонами, на столе переговоров лежат разные варианты урегулирования, которые основываются на принципе нахождения компромиссных решений. Кроме традиционных подходов в Арцахском урегулировании, в рамках данной статьи предствалены и некоторые альтернативные подходы и модели восприятия и урегулирования конфликта.

Khachik Galstyan

**THE USE OF ALTERNATIVE SETTLEMENT METHODOLOGIES IN
THE CONTEXT OF ARTSAKH CONFLICT**

Key words: *The Artsakh conflict, conflict transformation, Best Alternative To a Negotiation Agreement, integrative model*

From the point of view of the implementation of national interests and the provisioning of national security of the Armenian people the Artsakh issue has a paramount importance. For more than 25 years, as the the conflicting parties negotiate. Between this years on the negotiating table are presented various settlement options, which are based on the principle of finding compromise solutions. In addition to traditional approaches to the settlement, as part of this article are presented some alternative approaches and models of perception and regulation of Artsakh conflict.